ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1082-21.05.2025-ՊԱ-011/0), «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1082[1]-21.05.2025-ՊԱ-011/0) և «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-1082[2]-21.05.2025-ՊԱ-011/0) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**ՀՀ կառավարություն**	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով փոփոխվող գործող օրենքի 18.2-րդ հոդվածի վերնագիր	«Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածով «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 18.2-րդ հոդվածում կարգավորումներ են նախատեսվում նաեւ հաշվառման վկայագրի թվային տարբերակի վերաբերյալ: Ուստի համապատասխան լրացում կատարելու անհրաժեշտություն է առաջանում նաեւ օրենքի 18.2-րդ հոդվածի վերնագրում: «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «(...): Հոդվածների վերնագրերը համապատասխանում են հոդվածների բովանդակությանը: (...)»: Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում ենք նախագծով նախատեսել համապատասխան դրույթ, որով «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 18.2-րդ հոդվածի վերնագրում	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**

			«վերցնելով» բառից հետո կլրացվի «կամ թվային հաշվառման փաստաթղթի գործողությունը կասեցնելով» բառերը: Միաժամանակ, հաշվի առնելով առաջարկվող փոփոխությունը առաջարկվում է վերանայել նախագծի 1-ին հոդվածի կետերի համարակալումը:		
2.	**ՀՀ կառավարություն**	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ (լրամշակված 3-րդ) կետ	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի 18.2-րդ հոդվածի 2-րդ մասում կատարվող փոփոխության հստակությունն ապահովելու, ինչպես նաև ինկորպորացիայի խնդիրներից խուսափելու նպատակով առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածի 2-րդ (լրամշակված 3-րդ) կետի «, իսկ» բառը փոխարինել «կամ» բառով	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**
3.	**ՀՀ կառավարություն**	«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված	Թվայնացման ծրագրի շրջանակներում տրանսպորտային միջոցների պետական գրանցումը (հաշվառումը) ամբողջապես թվայնացնելու նպատակով առաջարկվում է նախագծով սահմանել համապատասխան դրույթ, որով օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող վարորդական իրավունքի վկայականներ կամ հաշվառման վկայագրեր ունեցող անձանց համար ՀՀ ներքին գործերի նախարարության էլեկտրոնային համակարգի միջոցով ինքնաշխատ եղանակով, առանց պետական տուրքի վճարման, կձևավորվի համապատասխանաբար թվային վարորդական վկայական կամ հաշվառման վկայագիր: Ըստ այդմ, առաջարկում ենք նախագծի 4-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով հետևյալ խմբագրությամբ. «2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող վարորդական	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			իրավունքի վկայականներ կամ հաշվառման վկայագրեր ունեցող անձանց համար Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության էլեկտրոնային համակարգն ինքնաշխատ եղանակով, առանց պետական տուրքի վճարման, ձևավորում է համապատասխանաբար թվային վարորդական վկայական կամ հաշվառման վկայագիր:»:		
4.	**ՀՀ կառավարություն**	«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	Հաշվի առնելով թվային հաշվառման վկայագրի պարագայում միայն դրա գեներացման փուլում ծախսերի իրականացումը, ինչը բացակայում է դրա փոխարինման դեպքում, ինչպես նաև այդ ծախսերի նվազ լինելը, առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով «Պետական տուրքի մասին» 16-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 26.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «26.1. սեփականատիրոջ անվամբ առաջին անգամ հաշվառվող ավտոմոբիլի, մոտոտրանսպորտային միջոցի, տրիցիկլի, քվադրիցիկլի, կցորդի (կիսակցորդի) միայն թվային հաշվառման վկայագիր տալու համար՝ բազային տուրքի եռապատիկի չափով»:	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**
5.	**ՀՀ կառավարություն**	«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 1.1- ին կետ	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածով «Պետական տուրքի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 1.1-ին կետում նախատեսել, որ թվային վարորդական վկայական տալու համար պետական տուրք պետք է վճարվի բացառապես որակավորման քննությունների դրական արդյունքների հիման վրա առաջին անգամ միայն թվային վարորդական վկայական տալու	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

			համար: Միաժամանակ, հաշվի առնելով, որ վարորդական վկայականի թվային տարբերակի թողարկման և հատկացման համար պետական միջոցների օգտագործումը ավելի նվազ է, քան դրա ֆիզիկական տարբերակի դեպքում, առաջարկում ենք դրա հատկացման համար նախատեսել պետական տուրք՝ դրա ֆիզիկական տարբերակի համար նախատեսված պետական տուրքի արժեքի կեսի չափով: Ըստ այդմ՝ առաջարկում ենք «Պետական տուրքի մասին» օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 1.1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1.1. որակավորման քննությունների դրական արդյունքների հիման վրա առաջին անգամ միայն թվային վարորդական վկայական տալու համար՝ բազային տուրքի վեցապատիկի չափով»:		
6.	**ՀՀ կառավարություն**	«Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 1.2-րդ կետ	Իրավական որոշակիություն ապահովելու և ինկորպորացիայի խնդիրներից խուսափելու նպատակով առաջարկվում է «Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածով օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասում լրացվող 1.2 րդ կետում «և (կամ)» բառերը փոխարինել «կամ» բառով, «օրը» բառերից առաջ լրացնել «աշխատանքային» բառը, «քննության» բառը հանել, «անհաջող փորձի» բառերը փոխարինել «բացասական հանձնված քննության» բառերով, իսկ «14-րդ օր անց» բառերը փոխարինել «14-րդ աշխատանքային օրը» բառերով:	**Ընդունվել է:** Կատարվել են համապատասխան փոփոխությունները:	**Ընդունվել է:**